N 01/01-630

«21» 05 2026

Ա/Ձ Հայկ Ղազարյան
(հասցե՝ ՀՀ Արարատի մարզ Փ.Վեդի Մ .Հովհաննիսյան փ 58տ
Էլ. փոստ՝ Khachatryan.88@gmail.com)

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ

Պայմանագիրը միակողմանի (մասնակի) լուծելու մասին

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ և Ա/Ձ Հայկ Ղազարյանի միջև 15.04.2026թ. կնքված N ՀՊՏՀ-ԳՀԱՊՁԲ-26/ԳԱ-1 ծածկագրով գնման պայմանագրի 1.1-ին կետի համաձայն՝ «Վաճառողը» պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով «Գնորդին» մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված»:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերությունը խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունները՝ «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ը, ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի **մասնակի** լուծեում է պայմանագիրը:

Պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով՝ կկիրառվի ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Միաժամանակ, «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում, պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Ընդ որում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը (ծանուցումը) հրապարակելու օրվան հաջորդող տաս

օրացուցային օրվա ընթացքում: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն գրավոր տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգերորդ օրը, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգերորդ օրը, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորությունը չի վերացել:

Ընդ որում, եթե՝ Ա/Ձ Հայկ Ղազարյանը սույն ծանուցումը ստանալուց հետո 5 հինգ բանկային օրվա ընթացքում մինչև 29.05.2026թ ներառյալ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900018001876 հաշվեհամարին վճարի 42500 (քառասուն երկու հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ որպես տուժանք պայմանագրի կատարման ապահովում և 63750 (վաթսուն երեք հազար յոթ հարյուր հիսուն) ՀՀ դրամ որպես որակավորման ապահովումները , ապա ընկերությունը չի ներառվի գնումների գործնթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Տեղեկացնում ենք նաև, որ համաձայն պայմանագրի 6.2 և 6.4 կետերի կհաշվարկվի յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա (9 օր) համար՝ 348.3 (երեք հարյուր քառասուն ութ հազար երեք տասնորդական) տոյժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով որոնը կհաշվանցվի Վաճառողին վճարման ենթակա գումարներից:

Նշված 42500 (քառասուն երկու հազար հինգ հարյուր) դրամ և 63750 (վաթսուն երեք հազար յոթ հարյուր հիսուն) դրամ գումարները անհրաժեշտ է վճարել կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված վերը նշված գանձապետական հաշվեհամարին և վճարված կտրոնների բնօրինակները ներկայացնել «ՀՊՏՀ» ՊՈԱԿ-ի Գնումների բաժին 502 սենյակ:

Ռեկտոր՝ Ա. Գրիգորյան

Կատարող՝ Նորայր Վարդանյան
Գնումների բաժնի պետ
Հեռ. 010 593 483
Էլ. փոստ gnumner.asue@mail.ru